ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/214

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 06.08.2021թ. թիվ 26/26-1/12561-2021 գրությամբ Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Իջևանի համայնքապետարանի 30.07.2021թ. թիվ 566 գրության հիման վրա, 06.08.2021թ. թիվ 26/26-1/12561-2021 գրությամբ նախաձեռնել է Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/214 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 09:25-ին և 20.08.2021թ. ժամը 09:33-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Իջևանի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Իջևանի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.07.2021թ. թիվ 566 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Իջևանի համայնքապետարանի կողմից ս/թ. հունիսի 16-ին կազմակերպվել է ՀՀ ՏՄԻՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-21/01 ծածագրով «ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Ա.Մելիքբեկյան փողոցի մայթի եզրաքարերի վերատեղադրման աշխատանքներ»-ի ձեռքբերման մրցույթ: Նշված ընթացակարգում հաղթող է ճանաչվել Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ն: Անգործության ժամկետի ավարտից հետո Մասնակցին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է պայմանագրի նախագիծը, սակայն օրենքով սահմանված ժամկետում Սմբատ Խաչատրյանի կողմից չի ներկայացվել պայմանագիրը, որակի և պայմանագրի ապահովումները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի 526-Ն որոշման 45-րդ կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը խնդրվում է տվյալ մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Կից ներկայացնում ենք նշված ընթացակարգի փաստաթղթերը սկանավորված տարբերակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/214 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 09:25-ին և 20.08.2021թ. ժամը 09:33-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/214 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/214 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Իջևանի համայնքապետարանի կողմից հայտարարվել է «ՀՀ ՏՄԻՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՏՄԻՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ն և որոշվել է հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը:

3. Իջևանի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.07.2021թ. թիվ 566 գրությամբ հայտնել է, որ անգործության ժամկետի ավարտից հետո Մասնակցին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է պայմանագրի նախագիծը, սակայն օրենքով սահմանված ժամկետում Սմբատ Խաչատրյանի կողմից չի ներկայացվել պայմանագիրը, որակի և պայմանագրի ապահովումները:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը Ընթացակարգի քարտուղարի կողմից Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ին ուղարկված լինելը, Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.08.2021թ. թիվ 26/26-1/12561-2021 գրությունը, «Իջևանի համայնքապետարանի 30.07.2021թ. թիվ 566 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,

3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար

նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Նույն կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ***ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:*** Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ **համապատասխան հիմքերով**, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9.3, 9.4 և 9.5 կետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում շինարարական աշխատանքների գնման դեպքում պայմանագրում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

9.4 **Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:**

9.5 **Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝** 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, Իջևանի համայնքապետարանի կողմից հայտարարվել է «ՀՀ ՏՄԻՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՏՄԻՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ն և որոշվել է հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը:

Իջևանի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.07.2021թ. թիվ 566 գրությամբ հայտնել է, որ անգործության ժամկետի ավարտից հետո Մասնակցին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է պայմանագրի նախագիծը, սակայն օրենքով սահմանված ժամկետում Սմբատ Խաչատրյանի կողմից չի ներկայացվել պայմանագիրը, որակի և պայմանագրի ապահովումները:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ **գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը,** որով կապացուցվեր պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը Ընթացակարգի քարտուղարի կողմից Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ին ուղարկված լինելը, **Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:**

Մինչդեռ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Մասնակցի տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում է Մասնակցին՝ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 9.4-րդ կետի համաձայն պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը էլեկտրոնային եղանակով պատշաճ ծանուցած լինելը, քանի որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ի կողմից

պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո է միայն հոսում 10 աշխատանքային օր ժամկետը, ինչը և չպահպանելու դեպքում Մասնակիցը զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից, որից հետո ի հայտ է գալիս Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից Մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի և կնքվելիք պայմանագրի նախագծի վերաբերյալ պատշաճ ծանուցած լինելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել դրա գոյության փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2021թ. թիվ 26/26-1/12561-2021 գրությամբ Սմբատ Խաչատրյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**